

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և  
Թուրքմենստանի կառավարության միջև մշակութային և  
գիտատեխնիկական համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և  
Թուրքմենստանի կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,  
ձգտելով խորացնել երկու երկրների բարեկամությունն ու  
համագործակցությունը,

համարելով, որ մշակույթի բնագավառում համագործակցությունը  
կնպաստի երկու ժողովուրդների փոխըմբռնման հետագա ամրապնդմանը,  
հավաստելով իրենց հավատարմությունը ՄԱԿ-ի Կանոնադրության  
և միջազգային այլ փաստաթղթերի սկզբունքներին և նպատակներին,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

### Հոդված 1

Կողմերը կնպաստեն միմյանց միջև համագործակցության  
զարգացմանը մշակույթի, գիտության, տեխնիկայի, կրթության և  
լուսավորության, սպորտի, զբոսաշրջության, մարդասիրական կապերի  
մյուս բնագավառներում, ինչպես նաև հասարակական  
կազմակերպությունների գծով՝ ներառյալ երիտասարդական,  
ստեղծագործական միությունները, ասոցիացիաները և հիմնադրամները:

### Հոդված 2

Կողմերը գիտության և կրթության բնագավառներում  
համագործակցությանը նպաստելու նպատակով իրենց  
հնարավորությունների սահմաններում՝

կզարգացնեն համագործակցությունը կառավարական  
կազմակերպությունների, գիտությունների ակադեմիաների, բարձրագույն և  
միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների,  
հանրակրթական դպրոցների, ուսումնական և գիտահետազոտական այլ  
հաստատությունների միջև,

կաջակցեն համատեղ գիտական ուսումնասիրությունների  
անցկացմանը, համատեղ գիտահետազոտական ինստիտուտների և  
գիտական լաբորատորիաների ստեղծմանը, ինչպես նաև  
գիտատեխնիկական համագործակցության արդյունավետ այլ ձևերի

մշակմանը, այդ թվում՝ իրենց ժողովուրդների պատմության և մշակույթի բնագավառում գիտական ուսումնասիրությունների զարգացմանը,

կնպաստեն դասախոսություններով հանդես գալու, գիտական հետազոտություններ անցկացնելու, գիտաժողովներին, վեհաժողովներին, կոնֆերանսներին, սեմինարներին մասնակցելու, ինչպես նաև ծանոթացման նպատակներով մասնագետների, գիտնականների և դասախոսների փոխայցելություններին,

կխրախուսեն ուսման, վերապատրաստման, սեմինարներին մասնակցելու և գիտական ուսումնասիրություններ կատարելու նպատակով ուսանողների, ասպիրանտների և փորձնականների փոխանակումները, մի Կողմի գիտական և ուսումնական հաստատություններում ուսումնառության կամ գիտելիքների կատարելագործման նպատակով գտնվող մյուս Կողմի անձանց կտրամադրեն թոշակներ,

կզարգացնեն գիտական, մանկավարժական և մեթոդական գրականության, ուսումնական և ցուցադրական ձեռնարկների, ուսումնական ֆիլմերի փոխանակումները:

### Հոդված 3

Կողմերը կհամագործակցեն բնագիտական և հումանիտար առարկաների դպրոցական ծրագրերի և դասագրքերի մշակման գործում:

### Հոդված 4

Կողմերը կուսումնասիրեն համալսարանների և այլ բարձրագույն ուսումնական հաստատությունների վկայագրերի և գիտական աստիճանների փոխադարձաբար ճանաչման հարցը՝ դրանց համարժեքության մասին համաձայնության գալու նպատակով:

### Հոդված 5

Կողմերը կխրախուսեն և կօժանդակեն մի Կողմի կրթական համակարգի համապատասխան ստորաբաժանումներում մյուս Կողմի ժողովուրդների լեզվի դասավանդմանը նպաստող միջոցները:

### Հոդված 6

Կողմերը կաջակցեն համագործակցությանը արվեստի և գրականության, պատմության և մշակութային հուշարձանների պահպանության, վերականգնման և նպատակահարմար օգտագործման,

ինքնագործ ստեղծագործության, ժողովրդական արհեստների ու մշակութային գործունեության այլ բնագավառներում, կխրախուսեն այցելությունները և այլ շփումները, աջակցություն կցուցաբերեն՝

1) գեղարվեստական կոլեկտիվների, խմբերի և անհատ կատարողների համերգային հյուրախաղերի, թատերական ներկայացումների և գեղարվեստական այլ ծրագրերի կազմակերպմանը՝ անկախ այն բանից՝ դրանք իրականացվում են կազմակերպությունների և հաստատությունների միջև կնքված համաձայնագրերի հիման վրա, թե կոմերցիոն ճանապարհով,

2) նկարիչների, ճարտարապետների, քանդակագործների, երգահանների, գրողների, լրագրողների, գրահրատարակչական գործի աշխատողների, գրադարանների, թանգարանների, արխիվների և մշակույթի մյուս բնագավառների ներկայացուցիչների փոխայցելություններին՝ ծանոթացման կամ փորձի փոխանակման նպատակով,

3) ցուցահանդեսների, ցուցահանդես-վաճառքների, դասախոսությունների և զեկուցումների կազմակերպմանը, գեղարվեստական, գիտական և մասնագիտական գրականության թարգմանությունների հրապարակմանը, արխիվային նյութերի և միկրոֆիլմերի, գրքերի, ձայնապնակների, տեսալսողական այլ նյութերի փոխանակմանը:

## Հոդված 7

Կողմերից յուրաքանչյուրը իր քաղաքացիների համար կապահովի մյուս Կողմի մշակութային նվաճումների, մասնավորապես, պատմականորեն գոյացած մշակութային արժեքների ժողովածուներին, հավաքածուներին հաղորդակցվելու լայն հնարավորություն:

Կողմերը կնպաստեն մշակույթի բնագավառի կադրերի պատրաստման, շահագրգիռ գերատեսչությունների և կազմակերպությունների միջև փորձի փոխանակման նպատակով համագործակցության զարգացմանը:

## Հոդված 8

Կողմերը կհամագործակցեն մշակույթի նյութատեխնիկական բազայի զարգացման հարցերում, կփոխանակեն նոր տեխնոլոգիաներ, փոխշահավետ հիմունքներով կիրականացնեն սարքավորումների և տեխնիկական միջոցների մատակարարումը մշակույթի և արվեստի հիմնարկներին:

## Հոդված 9

Կողմերը կնպաստեն համագործակցությանը կինոյի ասպարեզում և այդ նպատակով կխրախուսեն, մասնավորապես, կինոշաբաթների և նախնական ցուցադրումների անցկացումը, գեղարվեստական, փաստագրական և ժամանակագրական ֆիլմերի փոխանակումը, գեղարվեստական և փաստագրական ֆիլմերի համատեղ արտադրությունը, ինչպես նաև Կողմերի տարածքներում անցկացվող միջազգային կինոփառատոներին փոխադարձ մասնակցությունը:

Կողմերը կնպաստեն կինոկազմակերպությունների և կինոարտադրողների միջև անմիջական համագործակցությանը, կինոգործիչների և առանձին մասնագետների պատվիրակությունների փոխանակմանը:

Կողմերը կաջակցեն լուսանկարչության ոլորտում համագործակցության զարգացմանը:

## Հոդված 10

Կողմերից յուրաքանչյուրը կխրախուսի փոխանակումները գրահրատարակչության ասպարեզում և կաջակցի իր տարածքում մյուս Կողմի տպագիր արտադրանքի տարածմանը, բազմակողմանի աջակցություն կցուցաբերի գրական ստեղծագործությունների թարգմանության, միջգրադարանային կապերի, գրողների և լրագրողների, հրատարակչությունների և խմբագրությունների նյութերի փոխանակման, քաղաքական, տնտեսական, մշակութային, գիտական կյանքը լուսաբանող նյութերի հրատարակման գործին:

## Հոդված 11

Կողմերը կաջակցեն իրենց երկրների համապատասխան հեղինակային-իրավական կազմակերպությունների միջև համագործակցության զարգացմանը:

## Հոդված 12

Կողմերը կխրախուսեն փոխադարձ հիմունքներով երիտասարդական փոխանակումները: Դրանք կիրականացվեն խմբային և անհատական հիմունքներով:

## Հոդված 13

Կողմերը իրենց երկրների իրավասու կազմակերպությունների միջոցով կխրախուսեն փոխանակումները սպորտի և սպորտային ենթակառուցների ոլորտում, մասնավորապես, ղեկավարների, մարզիկների, մարզիչների, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի այլ մասնագետների փոխանակումները:

#### Հոդված 14

Կողմերը կխրախուսեն զբոսաշրջային փոխանակումները, կնպաստեն անհատական և խմբային զբոսաշրջային ուղևորությունների զարգացմանը՝ մասնավորապես կապված մշակութային և սպորտային միջոցառումների, ինչպես նաև ծանոթության և հանգստի նպատակով:

Կողմերը կաջակցեն փորձի և տեղեկության փոխանակմանը, ինչպես նաև զբոսաշրջային գոտիների և հյուրանոցների բարեկարգման, համապատասխան անձնակազմի պատրաստման ոլորտում համագործակցությանը:

#### Հոդված 15

Կողմերը կաջակցեն ռադիոհաղորդումների և հեռուստատեսության բնագավառում համագործակցությանը, մասնավորապես, հեռուստատեսային և ռադիոհաղորդումների ծրագրերի փոխանակմանը, հեռուստաֆիլմերի համատեղ արտադրությանը, հեռուստաֆիլմերի ու ռադիոծրագրերի արտադրման ընթացքում ծառայությունների մատուցման գործին:

Կողմերը կխրախուսեն ռադիոյի և հեռուստատեսության համապատասխան կազմակերպությունների միջև համագործակցությունը, ինչպես նաև պատվիրակությունների և առանձին մասնագետների փոխանակումները:

#### Հոդված 16

Կողմերը կսատարեն ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործերով իրենց ազգային հանձնաժողովների համագործակցությանը՝ նկատի ունենալով բազմակողմանի հիմունքներով մշակութային փոխանակումների զարգացումը:

#### Հոդված 17

Կողմերը կնպաստեն մյուս Կողմի տեղեկատվական գործակալությունների, մամուլի, ռադիոյի և հեռուստատեսության թղթակցական կետերի ստեղծմանն ու գործունեությանը:

#### Հոդված 18

Կողմերը կզարգացնեն համագործակցությունը իրենց մշակութային և գեղարվեստական արժեքների, ներառյալ պատմական և կրոնական հուշարձանները և օբյեկտները, փոխադարձաբար պահպանության և գրանցման հարցերում:

Կողմերը բարի կամքի դրսևորման սկզբունքով և բանակցությունների միջոցով կլուծեն կորսված կամ անօրինականորեն արտահանված և մյուս Կողմի տարածքում հայտնաբերված արվեստի գործերի հետ կապված հարցերը:

Այս կամ այն մշակութային և պատմական արժեքի սեփականության մասին վիճելի հարցեր ծագելու դեպքում Կողմերը պարտավորվում են լուծել դրանք առանձին արձանագրությունների հիման վրա:

#### Հոդված 19

Կողմերը կհամագործակցեն առողջապահության և շրջակա միջավայրի պաշտպանության բնագավառներում, կխրախուսեն պրակտիկ և գիտական աշխատանքի փորձի փոխանակումները, բժիշկների և մասնագետների փոխայցելությունները, ինչպես նաև համագործակցությունը տեխնիկայի և սարքավորումների փոխանակումների գործում:

#### Հոդված 20

Կողմերը կխրախուսեն համագործակցությունը ոչ կառավարական կազմակերպությունների միջև և միջոցառումների անցկացումը, որոնք ծառայում են սույն Համաձայնագրի նպատակներին:

#### Հոդված 21

Սույն Համաձայնագրի նպատակների իրագործման համար Կողմերը կհամաձայնեցնեն համագործակցության կարճաժամկետ ծրագրերը:

Այդ ծրագրերում տեղ չգտած միջոցառումների անցկացումը չի բացառվում, եթե դրանք իրենց բնույթով համապատասխանում են սույն Համաձայնագրի խնդիրներին:

Համագործակցության բովանդակությունը, նրա տնտեսական և կազմակերպական պայմանները անմիջականորեն կհամաձայնեցվեն համագործակցության սուբյեկտների կողմից՝ առանձին համաձայնագրերի հիման վրա:

## Հոդված 22

Կողմերը կստեղծեն ընդհանուր կամ միջգերատեսչական խառը հանձնաժողովներ, որոնք համագործակցության ծրագրի գործունեության ժամկետի ընթացքում կհավաքվեն ոչ պակաս, քան մեկ անգամ՝ հաջորդաբար երկու երկրներում:

Խառը հանձնաժողովների անդամները կնշանակվեն ըստ յուրաքանչյուր Կողմի գործող օրենսդրության: Նիստերում կնախագահի ընդունող Կողմի ներկայացուցիչը:

Իրենց նիստերում խառը հանձնաժողովները ի մի կբերեն փոխանակումների և համագործակցության արդյունքները, կնշակեն կարճաժամկետ ծրագրեր, կհամաձայնեցնեն դրանց իրագործման տեխնիկական և ֆինանսական պայմանները:

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ խառը հանձնաժողովների նիստերի միջև ընկած ժամանակահատվածում ծրագրերի մեջ կարող են կատարվել լրացումներ և փոփոխություններ:

Ծրագրերի գործողության ժամկետը լրանալուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ Կողմերը փոխանակում են իրենց նոր ծրագրերի նախագծերը:

## Հոդված 23

Սույն Համաձայնագրի կենսագործման կամ մեկնաբանման հետ կապված վիճելի հարցերը Կողմերը լուծում են խորհրդակցությունների միջոցով:

## Հոդված 24

Կողմերը կխրախուսեն իրենց երկրների մասնագետների և գիտնականների մասնակցությունը մյուս Կողմի մշակութային և գիտատեխնիկական ծրագրերի իրագործմանը, ինչպես նաև մասնագետներին և գիտնականներին պայմանագրային հիմունքներով երկարաժամկետ աշխատանքի հրավիրելը:

## Հոդված 25

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է հինգ տարի ժամկետով: Համաձայնագրի գործողության ժամկետը ինքնաբերաբար կերկարաձգվի, ամեն անգամ՝ ևս հինգ տարով, եթե Կողմերից ոչ մեկը հաջորդ հնգամյա ժամկետը լրանալուց վեց ամիս առաջ մյուս Կողմին գրավոր չժանուցի դրա գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Կատարված է Ազգաբառ քաղաքում 1993 թվականի օգոստոսի 24-ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, թուրքմեներեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1993 թվականի օգոստոսի 24-ից: